ԱՌԵՎՏՐԱԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՍԵՖՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Վ. Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

Սեֆյան շահ Թահմասպ I-ի (1524—1576 թթ.) ավելի քան կեսդարյա թագավորության պատմական ժամանակաշրջանի հետազոտությունը առավելապես ընթացել է տասնամյակներ շարունակվող ավերիչ պատերազմների ուսումնասիրության ուղղությամբ[1]։ Տերության ներքին կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին և հատկապես Սեֆյան պետության վարած տնտեսական քաղաքականությանը վերաբերող հարցերը ավելի սակավ են հետազոտության առարկա հանդիսացել։ Մինչդեռ պատմական սկզբնաղբյուրներում առկա են ուշագրավ տեղեկություններ պետության վարչատնտեսական համակարգի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ։ Ժամանակակից պատմիչներ Շարաֆ խան Բիթլիսիի, Հասան բեկ Ռումլուի, Իսքանդար Մունշիի մեծարժեք ժամանակագրություններում հատկապես ընդգծված է Սեֆյան շահերի հոգատարությունը պետական գանձարանի և ֆինանսական հնդիրների կարգավորման հարցերում, որը հաստատում են նաև եվրոպացի ուղեգիրները։ Շարաֆ խան Բիթլիսին, որին հանձնարարված է եղել շահ Թահմասպ I-ի մահից հետո ստուգել պետական գանձարանը, պատմում է այնտեղ կուտակված առասպելական չափերի հասնող հարստության՝ մի քանի հարյուր հազար թուման կանխիկ դրամի և ահռելի քանակությամբ ձույլ ոսկու և արծաթի մասին[2]։

Պետական գանձարանի եկամուտները հիմնականում գոյանում էին բնակչությունից գանձվող բազմապիսի հարկերից, ինչպես նաև նվաճողական-թալանչիական պատերազմներից։ Սեֆյան ժամանակաշրջանի հարկերի համակարգում որոշակի տեղ էին գրավում նաև առևտրաարհեստավորական խավերից գանձվող հարկերը, որոնցից ուսումնասիրողների կողմից առավել ուշադրության է արժանացել թամղա կոչվող հարկը։

Ստորև կփորձենք ի մի բերել հարկի ծագման և իրացման, ինչպես նաև անցած պատմական ուղու ուսումնասիրության ուղղությամբ ցարդ կատարված հետազոտությունների արդյունքները և նոր աղբյուրների օգնությամբ քննության առնել թամղայի վերացման հանգամանքները։

Թամղան, որպես առևտրականներից, արհեստավորներից ու շուկաներից գանձվող հարկ, XIII դարից սկսած լայնորեն իրացվում էր մոնղոլների կողմից նվաճված երկրներում։ Բնակչությունից գանձվող հարկերից այն ամենածանրերից մեկն էր թամղայի ծագման, տեխնիկական նշանակության, չափերի և իրացման ձևերի շուրջ կատարված ուսումնասիրությունների մեջ առանձնանում են Վ. Բարտոլդի հետազոտություններն ու եղրակացությունները։ Նրա մեկնաբանությամբ «թամղա տերմինի տակ հասկացվում էին ոչ միայն «droits de douane et de transit», *ինչպես պնդում է Դ'Օհսոնը։ Այս իմաստով*

---

[1] *Հմմտ. Հայոց պատմություն. հ. III, գիրք առաջին, Երևան, 1960, էջ 176—193։* И. П. Петрушевский. Азербайджан в XVI—XVII вв.—Сборник статей по истории Азербайджана. Вып. I. Баку, 1949, с. 262—271; О. А. Эфендиев. Образование азербайджанского государства Сефевидов в начале XVI века. Баку, 1961 . Lockhart. The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia. Cambridge, 1958.

[2] شرف خان بدلیسی، شرف نامه، جلد دوم، پطربورغ، ۱۸۶۲، ص ۲۵۲-۲۵۱.

թամղա հասկացությունը համապատասխանում է պարսկական բաջ տերմինին, որ դեռևս իսլամի առաջին դարերում օգտագործվում էր արաբական հեղինակների կողմից և որի հետ բառարաններում երբեմն նույնացվում է թամղա բառը»[3]: *Հենվելով Ռաշիդ ադ-Դինի, Վասսաֆի, Նախջևանիի և ուրիշների տեղեկությունների վրա, Բարտոլդը թամղան բացատրում է որպես «այն բոլոր հարկերը, որոնք հավաքվում էին քաղաքներում առևտրաարհեստավորական հաստատություններից, ներառյալ հասարակաց տները»*[4]:

Հետագայում, հաստատելով այս ընդհանուր բնութագիրը, հետազոտողները փորձել են ճշտել և կոնկրետացնել դրա նշանակությունը և գանձման ձևերը: Ա. Ալի-զադեի կարծիքով թամղան այն հարկն է, որ գանձվում էր քաղաքների առևտրական և արդյունաբերական հաստատություններից և այն վճարում էին ոչ միայն շուկաներում վաճառվող ապրանքների, այլև նրանց տեղափոխության համար, որպես մաքսատուրք: Թամղան գանձվել է հիմնականում դրամով և անվանվել «նաղդ» (կանխիկ)[5]:

Պետրուշևսկին, համաձայնելով Բարտոլդի բնորոշման հետ, ավելացնում է, որ թամղան գանձվում էր «ինչպես խոշոր, մեծածախ, այնպես էլ մանրածախ առևտրից, մինչև իսկ սննդամթերքի և վառելափայտի առևտրից, որ քաղաքային շուկաներն էին բերում շրջակայքի գյուղացիները: Այսպիսով, թամղան գանձվում էր ոչ միայն քաղաքացիներից, այլև գյուղական բնակչությունից, որը սննդամթերք էր վաճառում շուկաներում»[6]: *Այս հարցում փոքր-ինչ այլ կարծիքի է Ի. Կ. Կիկնաձեն, որն առանձին հոդված է նվիրել թամղայի գանձման բնութագրմանը իլխանության դարաշրջանում: Նրա խոսքերով՝ «ինչպես XIII—XIV դդ., այնպես էլ հետագա շրջանում թամղան առևտրական հարկ էր և նրա գանձումը չէր տարածվում արհեստագործական արտադրության վրա: Իհարկե, այս հարկը վճարում էին նաև արհեստավորները, սակայն միայն իրենց արտադրանքի վաճառման դեպքում, և ոչ դրանց պատրաստման համար»*[7]:

Իսկ ինչ են հաղորդում մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ սկզբնաղբյուրները:

Նասր էդ-Դին Թուսին հայտնում է հետևյալը. «Ինչ վերաբերում է հյուստներին (ահլ-ի մալ) և վաճառականներին, երկար ժամանակ նրանցից ոչինչ չէր պահանջվում, բացի այն, որ նրանք պետք է տային արքային իրենց ունեցվածքից, այնպես, որ 240 դինարից վերցվում էր 1 դինար և այն կոչվում էր «մալ-ի թամղա» և Չինգիզ խանի ժամանակներից հետո այն ճանաչվում էր որպես թամղա»[8]:

---

3 В. В. Бартольд. Сочинения. Т. 4. М., 1966, с. 332.

4 *Նույն տեղում:*

5 А. А. Али-заде. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв. Баку, 1956, с. 217—218.

6 И. П. Петрушевский. Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв. М—Л., 1960, с. 386—387.

7 Р. К. Кикнадзе. Таможные сборы в государстве ильханов.—Восточный сборник. Т. 1, Тбилиси, 1960, с. 117—118.

8 Nasr al-Din Tusi on Finance, by M. Minovi and V. Minorsky —Bulletin of the School of Oriental and African Studies. Vol. 10, p. 1—4, 1939—42, p. 761 *(պարսկ. բնագիր), 773 (անգլ. թարգմ.): Նույն հոդվածի ծանոթագրություններում (էջ 781—782) Մինորսկին նասր էդ-Դին Թուսիի տեքստը մեկնաբանում է այսպես. «Թամղան ներկայացված է որպես կապիտալի (ունեցվածքային) հարկ, որ հավասար է ունեցվածքի 1/240-ին, եթե նույնիսկ հարկը տարեկան է, սակը չափազանց ցածր է»: Հենվելով Ռաշիդ ադ-Դինի վրա, Մինորսկին գրում է. «Թամղան պատկանում էր քաղաքային բազմապիսի հարկերի թվին»: Հետագայում (XV դար) «թամղավաթ» տերմինը (թամղայի հոգն.), Մինորսկու կարծիքով, նշանակում էր այն բոլոր հարկերը, որոնք հիմնված չեն Ղուրանի վրա և համարվում են չարաշահում: Նույն Ռաշիդ ադ-Դինը թամղան համարում է հիմնականում դրամական հարկ (նաղդթա-*

Համդալլահ Ղազվինին, խոսելով Թավրիզի մասին, հայտնում է հետևյալը. «Նրա (Թավրիզի) դիվանական պարտավորությունները որոշված են թամղայով և 1343 թ. դիվանական տետրերում գրանցված է 870 թուման և 5000 դինար»[9]։ Եթե նկատի ունենանք, որ Թավրիզի թուманի (քաղաքը շրջակա գյուղերի հետ միասին) ամբողջ ստրեկան հարկր հավասար էր 115 թուման, ապա դժվար չէ տեսնել, որ պետական եկամուտների խոշոր մասը ստացվում էր առևտրաարհեստագործական հարկերից։

Աղբյուրների տվյալները գալիս են հաստատելու, որ թամղալի գանձման չափերն ըստ տեղի և ժամանակի տարբեր են եղել։ Վերը մենք տեսանք, որ ըստ Նասր էդ-Դին Թուսիի, իլխանության սկզբնական շրջանում թամղան գանձվել է ունեցվածքի $^1/_{240}$-ի չափով։ Սակայն նույն դարաշրջանի ավելի ուշ ժամանակներում այն կազմել է առևտրական գործարքներից ստացվող եկամուտի 5 տոկոսը[10]։ Ակնհայտ է նաև, որ թամղայի գանձման որոշված չափերն ու նորմերը ևս կայուն չեն եղել։ Թամղաչիների կամայականությունների, շատ դեպքերում էլ իշխողների՝ սեփական գանձարանի հարստացման նպատակով, հարկի նորմերը բազմապատկվել են և ուռճացվել։ Այդ մասին է վկայում, օրինակ, Աբդալլահ Ղիյասիի տեղեկությունը Ակ-կոյունլու Ուզուն Հասանի ձեռնարկումների վերաբերյալ։ Նա գրում է. «Ուզուն Հասանը ցանկանում էր վերացնել թամղան իր թագավորության սահմաններում։ Սակայն նրա էմիրները չհամաձայնեցին դրա հետ, ուստի այն դեղչելով, դարձրեց 20-ից մեկ դիրհեմ, վերցնելով ավելի պակաս, քան նախորդ սուլթաններն էին գանձում»[11]։

Սա նշանակում է, որ թեև դեռ Ղազան խանի օրոք թամղայի գանձման չափր որոշվել էր 5 տոկոս, սակայն հետագայում այն զգալիորեն բարձրացել էր և Ուզուն Հասանը ստիպված էր ոչ թե պակասեցնել, այլ վերականգնել նախկին չափը։ Ղուրանով չհաստատվող, սակայն գործնականում մեծ չափերով գանձվող հարկերի վերացումր մուսուլմանական տերություններում համարվում էր աստվածահաճո գործ։ Սակայն դրա իրագործումը այնքան էլ դյուրին

րին). տե՛ս Рашид-ад-Дин. Джами ат-таварих. Т. III, составитель научно-критического текста на персидском языке А. А. Али-заде, перевод с персидского языка А. К. Арендса. Баку, 1957, с. 482 (պարսկ. տեքստ), 274 (ռուս. թարգմ.)։

[9] حمدالله مستوفی قزوینی، نزهةالقلوب بکوشش محمد دبیر سیاقی، تهران، ۱۳۳۶، ص ۸۹. Պետրուշևսկին իր «Хамдаллах Казвини как источник по социально-экономической истории восточного Закавказья» (Известия АН СССР, Отделение общественных наук, М., 1937, с. 897) հոդվածում քննարկելով Ղազվինիի այս տողերը, իրավացիորեն նշում է, որ 870 թուման և 5000 դինարը «գրչի սխալ է, հարկի ճիշտ գումարը 87,5 թուման է»։

[10] Рашид ад-Дин. Переписка. Перевод, введение и коммент. А. И. Фалиной. М., 1971, с. 101. Այստեղ պարզորոշ գրված է. «Մենք որոշեցինք, որ Իսֆահանի բնակչության պարտավորությունները դիվանի նախիրների առջև կազմում են՝ ցանքսերից՝ $^1/_{10}$, թամղայից՝ տասանորդի կեսը։ Տե՛ս նաև՝ مکاتبات رشیدی، بسعی و اهتمام و تصحیح محمد شفیع، لاهور، ۱۳۶۷، ص ۳۳-۳۴ Անդրադառնալով այս հարցին, Օ. Էֆենդիևն ու Շ. Ֆարզալիևը, հենվելով նույն աղբյուրների վրա, չգիտես ինչու գրում են, որ Թամղան գանձվում էր գործարքի 10 տոկոսի չափով։ Տե՛ս О. А. Эфендиев, Ш. Ф. Фарзалиев. О подати тамга и ее значении в городской экономике Азербайджана и сопредельных стран в XV—XVI вв. Ближний и Средний Восток, товарно-денежные отношения при феодализме. М., 1980, с. 240.

[11] V. Minorsky. The Aq-qoyunlu and Land Reforms.—BSOAS, Vol. XVII, part 1—3, London, 1955, p. 459.

չէր, ինչպես դա երևում է վերը բերված օրինակից։ Ջնայած Ուզուն Հասանի նման հզոր տիրակալը փորձում էր ամբողջովին վերացնել թամղան, սակայն նրա էմիրների դիմադրությունը, որոնք չէին ցանկանում կորցնել եկամտի այս կարևոր աղբյուրը, ստիպեց նրան բավարարվել միայն որոշ զեղչով։

Առանձին դեպքերում թամղան վերացվում էր ժամանակավորապես, այս կամ այն միջոցառմանը նպաստելու նպատակով։ Այսպես, 1487 թ. Ակ-կոյունլու սուլթան Յա'կուբի հրամանով թամղայի և որոշ այլ հարկերի գանձումը արգելվեց Բագդադի ճանապարհի վրա, որը, ինչպես դրված է հրահանգում, «ամենակարճն է Քա'բե հասնելու համար, և որ ճանապարհի երկու ուղղություններով էլ թամղայի, բաջի, ռահդարիի, սոկաթիի, բախթեքաշիի, սալամիի և այլ հարկերի գանձումը չի թույլատրվում, և որ հարկահանները իրավունք չունեն ստուգելու ճանապարհորդների ուղեբեռները (փիրամոն-ե բուրհա նագարդանդ) և տանելու նրանց մաքսատուն (թամղա-խանա)»[12]։ Այս հրամանի նպատակն էր հեշտացնել մուսուլման ուխտավորների ճամփորդությունը Մեքքա՝ Քա'բեի մզկիթը։

Շարիաթով չհիմնավորված հարկերի վերացումը անհրաժեշտություն էր համարվում մահվանից կամ որևէ վտանգավոր ձեռնարկումից առաջ։ Այսպես, Բաբուրը, Իանի հզոր արքա Սանդամի դեմ պատերազմ սկսելուց առաջ հրաման տվեց, որ այլևս թամղա չգանձվի «ո՛չ քաղաքներում, ո՛չ դյուղերում, ո՛չ ճանապարհների վրա, ո՛չ անցումներում, ո՛չ գետանցներում, ո՛չ նավահանդիստներում»[13]։

Բավականին հետաքրքիր և կարևոր տեղեկություններ կան թամղայի և նրա գանձման ձևերի ու չափերի մասին XV—XVI դդ. եվրոպացի ճանապարհորդների մոտ։ Հատկապես կարևոր են այն տեղեկությունները, որոնք վկայում են, որ թամղայից ստացված եկամուտներն անցնում են գանձման իրավունքը կապալով վերցրած անձանց, ինչպես նաև, որ քրիստոնյա առևտրականները վճարում են ապրանքի արժեքի 10 տոկոսը, իսկ մուսուլմանները՝ 5 տոկոսը։ Տարանցիկ առևտրի համար նախատեսված ապրանքների համար վճարում էին ըստ ապրանքի քաշի[14]։

Ժամանակակից աղբյուրները միաբերան վկայում են, որ թամղան վերացվել է Սեֆյան շահ Թահմասպ I-ի կողմից, որը և գնահատվել է որպես հարկային քաղաքականության բնագավառում ձեռնարկված արմատական միջոցառում։ Հասան բեկ Ռումլուի վկայությամբ հիջր. 972 (1565) թ. հրապարակված հրովարտակով սեֆյան տերության սահմաններում վերացվում էր թամղան, որից պետությունը տարեկան 30 000 թուման եկամուտ ուներ[15]։

Մինչև վերջին ժամանակներս այս որոշման մասին մեր տեղեկությունները սահմանափակված էին հիշյալ և այլ պատմողական աղբյուրների տվյալներով[16], Բայց դոկտ. Աբդ-ուլ-Հոսեյն Նավային, Թավրիզի համալսարանի գրականության ֆակուլտետի տեղեկագրի վեցերորդ տարվա № 1-ից վերցնելով, շահ Թահմասպ I-ի ժամանակաշրջանի վավերագրերի 1972 թ. լույս տեսած ժողովածուի մեջ հրատարակել է Թավրիզի մզկիթներից մեկի որմի վրա փորագիր արձանագրությամբ մեզ հասած հիջր. 972 թ. շա'բան ամսի 12-ին (1565 թ. մարտի 15) թամղայի վերացման կապակցությամբ հրապարակված

---

12 Persia in A. D. 1478—1490. An abridged translation of Fadlullah b. Ruzbihan Khunji's Tarikh-i 'Alam-Ara-yi Amini, by V. Minorsky. London, 1957, p. 54—55.

13 В. В. Бартольд. Указ. соч., с. 334

14 Հ ով հ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ. հ. Ա, ԺԹ—ԺԶ դար (1253—1582). Երևան, 1932, էջ 315։

15 حسن روملو، احسن التواريخ، كلكته، ۱۹۳۱، ص ٤٢٨.

16 Թամղայի վերացումն արձագանք է գտել Նուռնիսկ Ջաքարիա Քանաքեռցու ժամանակագրության մեջ. տե՛ս Ջ ա ք ա ր ի ա ս ա ր կ ա վ ա գ. Պատմագրություն. հ. I, Վաղարշապատ, 1870, էջ 10։

հրովարտակի տեքստը[17], որը 1970-ական թթ. սկսած վկայակոչվում է հարցի ուսումնասիրությամբ զբաղվողների կողմից։

Անցյալ տարի, սակայն, մեզ հաջողվեց ստանալ Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող, նույն թվականին հրապարակված մի այլ հրովարտակի քսերոպատճենը[18]։ Այս հրովարտակը, ուղղված լինելով երկրի հյուսիս-արևմտյան շրջանների կառավարողներին և այլ վայրերի շարքում նաև Ջուղայի հարկային պաշտոնյաներին, կարևոր նշանակություն է ունեցել տեղի հայ առևտրական դասի և արհեստավորության համար և, որպես այդպիսին, պահպանվել է համայնքի կողմից մինչև մեծ գաղթն ու գաղթականության հետ բերվել Նոր Ջուղա։

Հրովարտակի բովանդակությունը, հիմնականում համապատասխանելով վիմագիր տեքստին, միաժամանակ բովանդակում է որոշ մանրամասնություններ, որոնք զգալիորեն նպաստում են հարցի առավել համակողմանի լուսաբանմանը։ Ուստի ավելորդ չենք համարում մեջ բերել հրովարտակի բնագիրը՝ հայերեն թարգմանությամբ։

Արաբական հրովարտակ հրապարակվեց այն մասին, որ Իշխանության ապաստան, ամիր-դիվան Շահ-Կուլի Սուլթանը և էմիրության ապաստան Շահ-վերդի-բեկ Սաաղլուն և Կարախան բեկ Բայբուրդլուն, դռոշի Հաջի Իլիաս բեկ Թաֆալուն ե Ջուղայի, Նախջևանի, Կոգչադանգիզի (Գեղարքունիք), Կաղզվանի և Շորագյալի բամղաչիները, ամալաները (գործակալներ) և ֆաիլաները (գործակատարներ) իմացած լինեն, որ Կովի տարվա մեծագոր շա'բան ամսի 12-ի լույս հինգշաբթի գիշերը (1565 թ. մարտի 15) երազում տեսա փառաբանյալ, մեծագույն բարիք. սուրբ վկա մարգարեին,— թող Աստված օրհնի և պահպանի նրան ու նրա սերունդներին։—Երբ ես նստած էի դեպի ղեբլե (աղոթարան) նայող մի դահլիճում, այդ դահլիճի հյուսիսային կողմի պատը ճեղքվեց, և սուրբը դուրս եկավ։ Նա իր օրհնյալ գլխին ուներ նուրբ մետաքսե կտորից կարմիր, առանց փաթթոցի (թագ)։ Ես մոտեցա և սրբի օրհնյալ ոտքը համբուրեցի, իսկ սուրբը իր հրաշագույն լեզվով, բարությամբ իր ծառային ասաց. «Թամղաները, որ բախշել ես, շատ լավ ես արել.— և ապա ասաց,— որ երկրի թամղայի մնացորդը ևս, որ մնացել է, այն էլ բախշիր»։ Հետևյալ երկու խոսքերից մեկն ասաց, քանի որ դա այն սրբի խոսքն է, ես հաստատ չեմ կարող ասել, թե որ մեկն էր։ Կամ ասաց. «Քեզանից գոհ ենք», կամ. «Քեզանից գոհ կլինենք»։ Եվ հետո ասաց, թե օրավուր կյանքդ պետք է երկարի և հարստությունդ ավելանա (իշխանությունդ մեծանա)։ Եվ ես երազում ասացի. «Հրամանը ձերն է, երկրի թամղայի մնացորդն ևս անեծքագրով բախշեցի»։

Ուստի, այսպիսով, մեր ապահով երկրների թամղայի մնացորդը, համաձայն այն սրբի հրամանի, բախշեցի և նրա վարձը տասնչորս անմեղների վրիժեցի։ Թող Աստծու օրհնությունը նրանց բոլորի վրա լինի։ Իսկ այս նվիրատվության վարձին էլ նվիրեցի Սահեր ազ-զամանին, թող Աստված օրհնի նրան և պահպանի։

Անհրաժեշտ է, որ այն օրից, երբ որ այս հրովարտակը տեղ հասնի, թամղայի, ռահդարության և թախթեքաշիության[19] և այլ անուններով, լինի դա հանապարհների վրա և կամ երկրամասի ենթակայություններում, ինչ անվան տակ էլ լինի, թե որպես բուն գումարի և կամ տուրքերի (որսումաք), մեկ դինար անգամ ոչ մի արարածից չվերցնեն և վերցնողին անեծքի ենթակա հա-

[17] شاه طهماسب صفوی، مجموعهٔ اسناد و مکاتبات تاریخی همراه با خصه. یادداشتهای دکتر عبدالحسین نوائی، تهران، ۱۳۵۰، ص ۲۲-۲۳.

[18] Դիվան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, պահարան № 6, վավ. 3։

[19] Վերը նշվել է, որ Մինորսկու հրատարակած Ֆազլուլլահ իբն Ռուզբիհան Խունջիի «Թարիխ-է ալամ արա-յե Ամինի» ժամանակագրությունում, այլ հարկերի շարքում, հիշվում է նաև «բախթեբաշի» կոչվող հարկը։ Թվում է, որ սա և հրովարտակում նշվող «թախթեբաշի» կոչված հարկը նույնը պետք է լինեն և ճիշտ ընթերցումը վերջինն է։



Հավասար 1-ի հրովարտակի բնագիրը

ճաչեն: Եվ ով որ վերոհիշյալին հակառակ գործի, հավիտյանս անիծյալ կլինի և այնպիսի սի պատիժ կստանա, որ ուրիշների համար դաս լինի:

Գրվեց 972 թ. Կովի տարվա շա'բան ամսի 12-ին, հինգշաբթի օրը (1565 թ. մարտի 15):

Լուսանցքում՝

Հայոդդաբար, այս երազի նկարագրությունը, սրբազան հրովարտակով, մանրամասն արձանագրված, ավելի ընդարձակ ուղարկվում է, որպեսզի fարի վրա վորագրեն և մզկիթներում կանգնեցնեն:

ԿՆԻՔ

Այժմ տեսնենք, թե ինչ տարբերություններ կան վիմագիր արձանագրության և Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի հրովարտակի միջև: Ինչպես վերևում երևաց, հրովարտակի վերջում հրամայված է երազի նկարագրությունը մանրամասն և ավելի ընդարձակ տարբերակով քարի վրա փորագրել և մզկիթներում կանգնեցնել: Եվ իսկապես, վիմագիր արձանագրությունն ավելի մեծ է, ինչպես նաև կան որոշ ոճական տարբերություններ: Մասնավորապես, զգալի տեղ է գրավում Թահմասպի տիտղոսների շարքը, ավելի մանրամասն է նկարագրված «սրբի» երևալու տեսարանը և նրա արտաքինը: Վիմագիր արձանագրության կարևոր տարբերությունն այն է, որ այստեղ թամղայի վերացման հրամանը տրված է ըստ երկրամասերի: Արձանագրության մեջ ասված է, որ Ադերբայջանի, Իրաքի (Պարսկական Իրաք), Fարսի, Խորասանի, Շիրվանի և Գիլանի երկրամասերի ոսկու և արծաթի փողերանոցների (դար ուլ-զարբ) թամղան, որ գեռ չի վերացվել, անեծքագրով վերացվում է:

Նույն 1565 թ. մեկ այլ հրովարտակ, որ վերաբերում է Նախջևանի փողերանոցի թամղալի զեղչմանը, հրատարակել է գերմանացի արևելագետ Հ. Հորստը[20], Նրա հրատարակած հրովարտակի բնագիրը նույնպես գտնվում է Նոր Ջուղայում, Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում և պահվում է 163 համարի տակ: Ձեռքի տակ ունենալով այս հրովարտակի լուսանկարը, մենք հնարավորություն ունեցանք համեմատելու այն Հ. Հորստի հրատարակած տեքստի հետ: Վերծանության մեջ նկատվում են որոշ վրիպումներ: Էական նշանակություն ունի հատկապես բնագրի ﻣﻨﺠّﺪ *(մնացորդ) բառի սխալ* ﻣﻨﺠﺪ *(կես) ընթերցումը: Հրովարտակում կարդում ենք. «Ուստի 972 թ. Կովի տարվա շաբան ամսի 12-ից, երբ ժամանակի տիրոջը,— թող Աստծու օրհնությունը նրա վրա լինի,— երազում տեսա և հրամայեց, որ թամղայի մնացորդն էլ բախշեմ, երկրի բոլոր փողերանոցների թամղան ևս բախշեցի»: Մինչդեռ Հ. Հորստի վերծանության մեջ ստացվել է՝ «թամղայի կեսն էլ բախշեցի», որով աղավաղվել է հրովարտակի իմաստը[21]: Այս հրովարտակը կարևոր է նաև այն տեսակետից, որ փողերանոցներից գանձվող հարկը նույնպես համարվել է թամղա ու զեղչվել:*

---

[20] Zwei Erlasse Sah Tahmasps I. von Heribert Horst.—ZDMG, Bd. 110, H. 2 1961, S. 301—307.

[21] *Նույն տեղում, էջ 302: Ջուգահեռ գերմաներեն թարգմանության մեջ՝ «Մենք կայսրության թամղայի կեսը նվիրել ենք Հուսեյնին(?)» (էջ 303): Ինչպես երևում է, Հորստը, չնայած կասկածելով, սակայն հրովարտակի «սահեբ ալ-զաման» տերմինի տակ հասկացել է Ալիի որդի Հուսեյնին, իսկ վիմագիր արձանագրության մեջ հանդիպող նույն տերմինը Ծ. էֆենդիևը և Շ. Fարզալիևը ընկալել են որպես Ալիի տիտղոսներից մեկը. Տե՛ս* О. А. Эфендиев. Указ. соч., с. 241. *Հանրահայտ է, որ «սահեբ ալ-զաման» (ժամանակի տեր) տերմինի տակ շիա վարդապետությունը հասկանում է տասներկուերորդ՝ «թաքնված» իմամ Մեհդիին: Տե՛ս* А. Массэ. Ислам. М., 1963, с. 145. *Ասենք նաև, որ Շարաֆ խան Րիթլիսին ուղղակի գրում է, թե շահ Թահմասպը երազում տեսել է «իմամ Մեհդիին»:* شرف خان ... ص ۲۲٦-۲۲۸.

Վիմագիր արձանագրության մեջ ասվում է, որ, ինչպես ամբողջ երկրում այնպես էլ Թավրիզի և այնտեղից դեպի էրզրում և Արաղ (Պարսկական Իրաք) տանող առևտրական ճանապարհների թամղան, որ տարեկան ընդհանուր գումարով հավասար է 3875 թումանի և ութ հարյուր դինարի, նույնպես վերացվում է[22]։ Այս փաստը գալիս է մի ավելորդ անգամ ևս հաստատելու էրզրումի վրայով անցնող և դեպի Ջմյուռնիա գնացող միջազգային տարանցիկ առևտրի մայրուղու կարևոր նշանակությունը[23]։ Միևնույն ժամանակ, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի հրովարտակում Ջուղայի, Նախջևանի, Գնդարքունիքի, Կաղզվանի և Շորագյալի առանձնահատուկ նշումը հաստատում է, որ այս վայրերը գտնվում էին առևտրական ճանապարհների վրա, որոնցից Ջուղան, Նախջևանը և Կաղզվանը՝ Թավրիզ—Ջմյուռնիա միջազգային տարանցիկ առևտրի մայրուղու, Գեղարքունիքը՝ այսպես կոչված «Վրաստանի ճանապարհի», իսկ Շորագյալը՝ Երևանից Կարս գնացող և Հասան-Ղալայում վերոհիշյալ գլխավոր մայրուղուն միացող ճանապարհի վրա[24]։

Ինչպես երևում է հրովարտակի տեքստից, Թահմասպի գերբնական երազի ժամանակ «իմամ Մեհդին» նրան ասել է. «Թամղաները, որ բախշել ես, շատ լավ ես արել, երկրի թամղայի մնացորդը ևս, որ մնացել է, այն ևս բախշիր»։ Եվ Թահմասպն էլ, հենվելով «սրբի» խոսքերի վրա, ասում է. «Հրամանը ձերն է, երկրի թամղայի մնացորդը ևս անեծքագրով բախշեցի»։

Այս տողերը հիմք են տվել Օ. Էֆենդիևին և Շ. Ֆարղալիևին անվերապահորեն ընդունելու, որ այս հրովարտակից առաջ եղել է մեկ ուրիշը, որով վերացվել է թամղայի կեսը, այսինքն այս դեպքում խոսքը գնում է մնացած կեսի վերացման մասին, որին հեղինակները ցավով ավելացնում են, որ ոչ մի տեղեկություն չկա առաջին բարեփոխման ժամանակի մասին[25]։ Նման կարծիքը, անշուշտ, դուրկ չէ տրամաբանությունից։ Սակայն, ինչպես երևում է, այդ մասին գրավոր կարգադրություն չի եղել։ Համենայն դեպս այդպիսի կարգադրության վերաբերյալ որևէ տեղեկություն չկա։ Ե՛վ Շարաֆ խան Բիթլիսին, և՛ Հասան բեկ Լումլուն, և՛ Իսքանդար Մունշին չափազանց մանրամասն խոսում են Թահմասպ I-ի այս բարեփոխման մասին, նշելով միայն վերը մեջ բերված հրովարտակի տարեթիվն ու ամսաթիվը։ Հայտնի է, որ նման բարեփոխումներն իրականացվում էին շահական հրովարտակներով, իսկ այլ կամ նույն թվականով մեզ ուրիշ հրովարտակ հայտնի չէ։ Պարզ է նաև, որ թամղայի վերացման նախաձեռնությունը վերագրելով «իմամ Մեհդիին», Թահմասպը, այդ որոշումը սրբագործելով, դարձնում է անառարկելի։ Հավանաբար, մինչև հրովարտակի հրապարակումը, Թահմասպը թամղայի վերացման ինչ-որ փորձեր ձեռնարկելով, հանդիպել է արքունի վերնախավի և թամղաչիների դիմադրությանը, որպիսի իրավիճակ, ինչպես տեսանք, ստեղծվել էր նաև Ուզուն Հասանի օրոք։ Եվ ահա, ծրագրային իր երազով Թահմասպը փորձել է կանխել դիմադրությունը և իրագործել տերության համար կարևոր նշանակություն ունեցող և տնտեսական զարդացմանը նպաստող միջոցառումը։

Համաձայն հրովարտակի, արգելվում էր ոչ միայն թամղայի բուն դումաների և մնացորդի դաճումը, այլև այսպես կոչված ոբսումաթինը։ Իսում կամ ոբսում (կարգ, սովորույթ) էին կոչվում այն տուրքերը, որոնք գանձվում էին որպես հավելյալ ռոճիկ՝ պետական բարձրաստիճան ու կրտսեր պաշտոնեու-

---

22 شاه طهماسب صفوی ... ص ۲۳.

23 Այս մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 8, էջ 61—68։

24 Նույն տեղում, տե՛ս քարտեզը։

25 О. А. Эфендиев. Указ. соч., с. 241. Մեզ թվում է, որ գրելով «առաջին բարեփոխման» ժամանակ թամղայի կեսի վերացման մասին, հեղինակները չփոթմունքի մեջ են ընկել Հ. Հորսթի հրապարակման պատճառով, քանի որ վիմագիր տեքստում, որը հիմք է հանդիսանում իրենց ուսումնասիրության համար, «կես» բառ ընդհանրապես գոյություն չունի։

Քյան օգտին, որոնցից էին սադրի, վեզիրի, դարուղայի, ֆինանսական և հարկային պաշտոնյանների օգտին գանձվող ռասմերը[26]։

Թամղայի տարեկան ընդհանուր գումարը Սեֆյան սեփականության բյուջեի նախապես որոշված, կարևոր մասերից է եղել[27]։ Կապալով տրվել է ոչ միայն մաքսատներից և ճանապարհապահպանական կետերից (ռահդարխանա), այլև փողերանոցներից (զառաբխանա) թամղայի գանձման իրավունքը։ Հայաստանում այս պաշտոնները վերագանցապես զբաղեցնում էին հայ խոջաները[28]։

Որոշ դեպքերում թամղա կամ հոգնակի թամղավաթ հավաքական հարկային տերմինի սակ հասկացվել են մի շարք տուրքեր, որոնք գանձվել են տարբեր անունների տակ, ինչպես օրինակ՝ ռահդարի, բաջ, թախթեբաշի և այլն[29]։

Որոնք էին 1565 թ. այս բարեփոխման դրդապատճառները։ 1555 թ. թուրքերի հետ հաշտություն կնքելուց հետո Թահմասպ I-ը փորձում էր վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և զարկ տալ առևտրին ու արհեստագործությանը, որոնց զարգացմանը մեծ չափով խանգարում էր թամղան՝ առևտրաարհեստագործական ծանր հարկը։ Հայկական աղբյուրների խիստ թերի տվյալներով միայն Հայաստանի քաղաքներում կային շուրջ երեք տասնյակ տարբեր մասնաճյուղերի արհեստավորներ՝ աղեգործ, արծաթագործ, բրուտ, գդակկար, դաբաղ, դանակագործ, դարբին, դերձակ, խազազ, կերպասագործ, կոշկակար, կտավագործ, հյուսն, ճոն, պայտառ, ոսկերիչ, ջուլհակ, քարտործ և այլն[30]։ Կարելի է պատկերացնել, թե միայն արհեստագործներից գանձվող թամղան և նրա անվան տակ թուլլատրվող չարաշահումները ինչ չափերի են հասել։ Էլ չենք խոսում առևտրական խավերից գանձվող հսկայական գումարների մասին։

Ավելի դժվար է գնահատել այս բարեփոխման հետևանքները։ Օ. Էֆենդիևը և Շ. Ֆարզալիևը իրենց հոդվածում այսպես են գրում. «Թամղայի՝ գանձարանի եկամուտների այս կարևոր հոդվածի վերացումը հարկադրված քայլ էր կենտրոնական կառավարության կողմից, դրդված դասակարգային հակասություններն սրմամբ և քաղաքային կյանքի, արհեստների և միջազգային առևտրի զարգացման հետամտությամբ»[31]։ Ինչպես տեսնում ենք, հեղինակները՝ լավականին ճիշտ ձևակերպելով թամղայի վերացման դրդապատճառները, խուսափում են ասել դրա հետևանքների գնահատականը։ Թվում է, որ միանշանակ պատասխան տալ այս հարցին հնարավոր էլ չէ։ Բանն այն է, որ այս բարեփոխությունից շատ չանցած նորից վերսկսվեցին թուրք-իրանական ավերիչ պատերազմները, որոնց պայմաններում խոսել առևտրի և արհեստագործության վերելքի մասին անհնար է։ Սակայն արդեն XVII դարում, 1639 թ. Կասր-ի Շիրինի պայմանագրից հետո առևտուրը, մասնավորապես արտաքին և տարանցիկ առևտուրը, և արհեստագործությունը դգալի վերելք են ապրում շնորհիվ համեմատաբար երկարատև խաղաղության ընձեռած պայմանների։ Պետք է ենթադրել, որ այս բանում իր դերն է խաղում նաև առևտրաարհեստագործական ծանր հարկի՝ թամղայի բացակայությունը։ Իսկ թե ինչ ձևով է իրագործվել Թահմասպ I-ի հրամանը թամղայի վերացման մասին, կարելի է դա-

---

26 И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв. Л., 1949, с. 279; А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках. Ереван, 1972, с. 245.

27 حسن روملو ... ص ۲۱۸.

28 Ջաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 99։ ԺԶ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս երկրորդ (1451—1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1958, էջ 130։

29 Դիվան նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, պահարան № 6, վավ. 3։

30 Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 70—71։

31 О. А. Эфендиев. Указ. соч., с. 242.

տել Հասան բեկ Ռումլուի և Իսքանդար Մունշիի ժամանակագրություններում տեղ գտած հետևյալ բեյթից՝

اثر نماند ز تمغا بغیر از آن داغی

که در درونهٔ تمغاچی از عم تمغاست [32]

Մի հետք անգամ չմնաց թամղայից այսուհետ,
Բացի թաստայի այրոցքից, որ մնաց թամղաչու սրտում։

Իսկապես, հետագայում թամղայի փոխարեն հանդիպում են այլ. ավելի մեղմ առևտրային և արհեստագործական հարկատեսակներ[33]։

ТОРГОВО-РЕМЕСЛЕННЫЙ НАЛОГ В СЕФЕВИДСКОМ ГОСУДАРСТВЕ В XVI ВЕКЕ И ОБСТОЯТЕЛЬСТВА ЕГО УПРАЗДНЕНИЯ

В. А. ПАПАЗЯН

Резюме

Изучением возникновения и значения налога *тамга* занимались многие востоковеды. Ими установлено, что тамга—это торгово-ремесленный налог, распространенный во всех странах, завоеванных монголами. По свидетельству хроник Хасан-бека Румлу, Шараф-хана Битлиси и Искандара Мунши, тамга была упразднена шахом Тахмаспом I в 1565 г. Один из вариантов указа (сохранившийся в виде лапидарной надписи) об упразднении тамги впервые был издан в 1972 г. Как выяснилось, другой вариант указа об упразднении тамги ныне хранится в архиве монастыря Спасителя в Новой Джульфе. Совпадая во многом с лапидарным текстом, этот вариант указа имеет и значительные различия, так как направлен налоговым чиновникам Джуги и других армянских городов. В частности, особое упоминание в указе о городах Джуге, Нахичевани, Кагызмане, Гегаркунике и Шорагяле подтверждает важное значение этих городов на транзитных торговых путях.

В статье рассматривается также указ того же 1565 г. об упразднении тамги с монетного двора Нахичевани, изданный немецким востоковедом Х. Хорстом. Корректируются некоторые погрешности, допущенные Хорстом при расшифровке текста.

---

[32] حسن روملو... ص ٤٢٨. اسکندر منشی... ص ۱۲۳.

[33] Tadhkirat al-Muluk, translated and explained by V. Minorsky. London, 1943, p. 81, 83 (*անգլ. թարգմ.*), 77a, 81a (*պարսկ. բնագիրը*), *148, 180* (*ծանոթագրությունները*)։